Վեպը ստեղծվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության
«Աջակցություն ստեղծագործողներին և հետազոտողներին»
դրամաշնորհային ծրագրի շրջանակում:

Սեղմագիր

Ի՞նչ է պատերազմը, կա՞ արդյոք խաղաղություն, և ամենակարևորը՝ ի՞նչ անել հիմա: Friedensdorf-ը ինքնակենսագրական, վավերագրական, քաղաքական, միստիկ վեպ է: Զուգահեռ ծավալվող պատումների կենտրոնում պատերազմն է առհասարակ և քառօրյա ու 44-օրյա պատերազմները մասնավորապես: Դրանց հատման կետում պատմողն է՝ պատերազմ չգնացած մարդը, որը, այլ մարդկանց կոշիկների քուղերն օգտագործելով, տեսնում է վերջիններիս երազները: Վեպը խաղաղության փնտրտուքի, պատերազմի տեսանելի և չերևացող հետևանքների, մեծ ողբերգության, փոքր ուրախությունների մասին է:

Վեպում օգտագործված են հատվածներ պաշտոնական հաղորդագրություններից, մամուլից, հարցազրույցներից, սոցցանցային գրառումներից, հայ և օտարազգի գրողների ստեղծագործություններից և այլն՝ իբրև ընդհանուր տեքստ՝ առանց չակերտների, առանց ընդգծման:

մեր մարմինների պես խեղված ու կիսատ, պատերազմի
մղձավանջի պես անվերջանալի այս վեպը նվիրում եմ
Կամիլին, Հայկին և Խաղաղության գյուղի բոլոր
երեխաներին՝ հույսով, որ այն կգտնի նրանց…

վեպը նվիրվում է ինձ հարազատ հոգիներին՝
Ամալյա և Վերներ վան Գենթներին…

Վայր, ուր խաղաղ է

«Friedensdorf International» միջազգային բարեգործական ընկերության ծրագրի շրջանակում ամեն տարի անվճար բուժում ստանալու նպատակով Գերմանիա են մեկնում վիրավոր կամ հաշմանդամ հարյուրավոր երեխաներ, հիմնականում՝ աշխարհի՝ պատերազմական և ճգնաժամային իրավիճակներում գտնվող անկյուններից, այդ թվում՝ նախկին Խորհրդային Միության երկրներից:

Հյուսիսային Ռեյն-Վեստֆալիա երկրմաս, ավան Օբերհաուզենի ծայրամասում: Այստեղ է գտնվում Friedensdorf-ը, որ գերմաներենից թարգմանաբար նշանակում է «խաղաղության գյուղ»: Սպիտակ, երկհարկանի գեղեցիկ տնակներում են տեղակայված երեխաների ննջասենյակները, վերականգնողական կենտրոնն ու ճաշարանը, իսկ քիչ հեռվում հրապարակն է, ուր հինգ տղաներ՝ երկուսը հենակներով, մեկը՝ անվասայլակով, խաղում են: Նրանք շուտով հեռանում են՝ հերթական զննման, որին հաջորդելու է ճաշը: Վերականգնողական կենտրոնում այսօր իր փոքրիկ այցելուներին է սպասում Մ. Ա. Խ.-ն՝ նախկինում վիրաբույժ և թերապևտ, իսկ հիմա՝ թոշակառու, որն ազատ ժամանակը տրամադրում է Ֆրիդենսդորֆի երեխաներին: Ա. Խ.-ն գիտի, որ երեխաները հատուկ խնամքի կարիք ունեն. առանց ընտանիքի, առանց լեզվի իմացության նրանք, հաճախ, դժվարանում են բարձրաձայնել իրենց անհանգստությունները:

Հիվանդ երեխաներին օգնելու միտքը Օբերհաուզենի բնակիչների մոտ առաջացել է 1967 թվականին Մերձավոր Արևելքում տեղի ունեցող վեցօրյա պատերազմի արդյունքում: Ֆրիդենսդորֆը, կարելի է ասել, կառուցվել է ողջ աշխարհի ջանքերով. մեկն օգնել է շենքերի կառուցման հարցում, մյուսը՝ շինանյութ է մատակարարել, մեկ ուրիշը ֆինանսական գործերն է վարել և այլն: Բուժման կարիք ունեցող առաջին երեխաներն այստեղ են եկել Վիետնամում ընթացող պատերազմի պատճառով, որից ոչ շատ ժամանակ անց էլ ձևավորվել է Ֆրիդենսդորֆը այնպիսին, ինչպիսին կա այսօր: Ֆրիդենսդորֆը գործում է բացառապես հանգանակությունների շնորհիվ, աշխատակիցների զգալի մասը կամավոր հիմունքներով է գտնվում այստեղ:

Ճաշի ժամն է, երեխաները հավաքվել են ճաշարանի մուտքի դիմաց, խաղում են, խնդրում լուսանկարել իրենց, հետո՝ անպայման ցույց տալ նկարը: Երեխաներից մեկը իր լեզվով բղավում է «խաղաղություն» բառը. գեղեցիկ

ավանդույթ՝ ուտելուց առաջ: Ճաշից հետո դաստիարակները կարդում են այն երեխաների անունները, որոնք հաջորդ օրը մեկնելու են տուն, իսկ նրանց փոխարեն շուտով այստեղ կլինեն 88 նոր՝ սեփական երկրներում անբուժելի հիվանդություններ ունեցող երեխաներ, որոնց բախտ է վիճակվել ապաքինվելու:

Երեխաները շտապում են իրենց սենյակներ, ոմանք գնում են ֆուտբոլ խաղալու: Հինգ-վեց տարեկան աղջնակը պատուհանից հայացքով մեզ է ճանապարհում, ժպտում, ձեռքով անում իբրև հրաժեշտ: Հոգիդ է ջերմանում և սիրտդ ուրախությամբ լցվում մտքից միայն, որ աշխարհում կա խաղաղության ու բարության այս կղզյակը…

Քաղվածք լրագրից

Մուտք

…How do you know that the earth
isn’t some other planet’s hell?…

Aldous Huxley

…Но Бог шепнул: глаза закрой,
и я заснул опять…

Иосиф Бродский

…հիմա՝ արթնության պահին, չեմ կարողանում որոշել՝ օր, ամիս, թե տարի է անցել, հիմա ժամանակի զգացողությունը հեղհեղուկ է, հիմա բացում եմ աչքերս, ու ծնոտս անշարժ է, քարացել է, մի՛ անհանգստացիր, կանցնի՛, հորդորում եմ ինքս ինձ, բացում եմ աչքերս, ու մարմինս այրվածքի սպիներով է ծածկված, ցավ եմ զգում, բանի տեղ մի՛ դիր, առաջին անգա՛մը չի, ասում եմ, բացում եմ աչքերս, սպիներն, իրոք որ, անհետացել են, ծնոտս գործում է, բայց ոտքս չկա, գոնե ծունկս

պահեին, տխրում եմ, խոր շո՛ւնչ քաշիր, բացում եմ աչքերս, ոտքս տեղում է, ծունկս էլ՝ բացվում-փակվում, այժմ թևս է կտրված, տասն անգամ անշտապ շնչի՛ր, կրկնում եմ, կթողնի՛, բացում եմ աչքերս, ու մյուս թևս էլ չկա, սարսափում եմ, այտերս թրջվում են արցունքից… հիմա՝ արթնության պահին, ինքս ինձ չտեսնելու համար անկողնում պառկած նայում եմ պատուհանին, հեռվում շեկ բլուրներ են, հեռվում էլեկտրասյուների տխուր շարան է, իսկ կայարանի բարձունքից երևում է տանս կարմիր կտուրը, իմ թաքստոցի կտուրը, որ նայողի աչքին նետվող արյուն է, գիտեմ, կարմիր-կարմիր, գիտեմ, կարմիր, հիմա ինքս ինձ չտեսնելու համար նայում եմ առաստաղի ճաքերին ու լսում՝ ինչպես է ծառի ճյուղը քսվում ապակուն, ձայն, ճյուղը, ձայն, կարևորը ոչ մի դեպքում չհանձնվելն է ու պատերին չնայելը, նայեցիր՝ կորած ես, ձայն, ամեն անգամ վճռում ես, որ չես նայելու, բայց չի ստացվում, բայց հայացքդ քեզնից անկախ փախչում է, ու սկսվում է, կարմիր, կաս-կարմիր, գաղտնիքը պատերը ծածկող պաստառն է, սկսվում է, հայացքդ մեխվում է հին, սովետական պաստառին, նախշերն ասես որսում են այն՝ անբացատրելի կերպով ազդելով կամքիդ վրա, չէ, շուտով աչքերիդ առաջ սահում են պատկերներ, որ մոռացված էիր կարծում մանկությանդ խորքերում, չէ, վստահ էիր՝ թողել ես հազարավոր կիլոմետրեր հեռու մի վայրում, թվում էր՝ չեն էլ եղել, հորինել ես… հիմա նայում ես պատին, սկսվում է, նախշերն ավելի ու ավելի են ընդգծվում, չէ, սենյակն անպետք թղթի պես ճմռթվում, դառնում է բռիդ չափ, սկսվում է, հիմա ամեն ինչ չափից դուրս իրական է տեսիլք լինելու համար, հիմա թվում է՝ ձեռքդ երկարելու դեպքում կհասնես, սկսվում է, կշոշափես, սկսվում է, հիմա, չէ, պատկերները կլանում են, չէ, մարմինդ, չէ…

-…

-…

-…

-…

-…

-…

-…

-…

-…

-…

-…

-…

-…

-…

-…

-…

-…

Գլուխ 1

…ռուսախոս տղաներով առավոտյան իրար տեսնելիս ասում էիք Guten Morgen, փորձում էիք հնարավորինս զավեշտալի կերպով արտաբերել դիմակավորներից լսած բառակապակցությունը, խաղը դուր եկավ նաև աֆղանստանցիներին, խաղը նրանց սրտով էլ էր, շուտով բոլորդ մի մարդու պես նույնն էիք անում. Guten Morgen, դժվար չէ կռահել, թե ում մոտ էր ամենալավը ստացվում, Guten Morgen, գոռում էր կոշտացրած ձայնով, Guten Morgen, կոկորդ քերող ձայնը զնգում էր միջանցքում, Guten Morgen, չե՞ք լսում, Guten Morgen, ասում եմ ձեզ, գիտեմ, Կամիլի արարքն ամեն անգամ զվարճացնում էր, նայում էիք՝ չկարողանալով զսպել, գիտեմ, ծիծաղներդ, գիտեմ…

-…

-…

-…

-…

-Այ քեզ կոպիտ լեզու՝ բարի լույս են ասում, փոշմանում ես, որ արթնացել ես:- Շարունակում է Հայկը:

-Իսկ ինձ դուր է գալիս,- ծամելով՝ վրա է բերում Կամիլը,- հավես լեզու է:

-Էստեղի հետ կապված ամեն ինչ էլ քեզ դուր է գալիս, դրախտ ես ընկել:- Արհամարհական նետում է Հայկը:

-Սուտը մեռնի՞ թե էդպես է:

-Դե ասա՛, ինչի՞ց ես դժգոհ:

-Շատ բաներից:

-Օրինա՞կ:

-Կթողնե՞ս հանգիստ ուտեմ:

-Թեման մի՛ ցրի:- Կտրուկ արձագանքում է Հայկը:

-Քեզ ի՞նչ եղավ, նոր լավ էիր:- Լրջանալով՝ պատասխանում է Կամիլը:

-Ես միշտ էլ լավ եմ, ուղղակի տղամարդը իր խոսքից հետ չի կանգնում:

-Էդպես հա՞,- դեմքն իսկույն խոժոռվում է, նորից սկսվում է, Կամիլի դեմքը խոժոռվում է,- օրինակ ե՞ս ուզում, ասեմ՝ ամենաշատը քո փնթփնթան բնավորությունից եմ զզվում:

-Բնավորությանս հետ գործ չունես:- Հայկը ձայնը բարձրացնում է:

-Ուրեմն դու էլ ուրիշի լեզվի հետ գործ չունես:- Կամիլն էլ է խրոխտանում:

-Կոպիտ է, ասում եմ՝ կոպիտ է, քե՛զ ինչ, գերմանացի՞ ես:

-Գերմանացիները քեզ ձրի բերել են բուժելու, դու անուն ես կպցնում:

-Երբ քո լեզվին անուն կկպցնեմ, էդ ժամանակ էլ կխոսես:

-…

-…

-…

-…

-…

…գնում ես միջանցք, նույնն ես անում, միշտ նույնը, իսկ պատերին վերջույթների պրոթեզներ են ամրացված, իսկ մի պատն ամբողջությամբ ծածկված է բազմաթիվ լուսանկարներով, որոնցից մարդիկ են ժպտում, բոլորը մեծահասակ են ու բոլորը ժպտում են, նայում ես, ասում են՝ նրանք ժամանակին այստեղ են եղել, ասում են՝ նրանք այստեղ են եղել ձեզ պես, նայում ես, մեծահասակ լինելու գրավչություն, սուտ է, մեծահասակի մարմին, սուտ, կատարյալ մարմին, ախր սուտ է, նույնն ես անում, միշտ նույնը, իսկ լուսանկարների մարդիկ ժպտում են, քեզ են նայում ու ժպտում՝ պարգևելով ջերմ զգացողություն, որ շտապում է սփոփել՝ մենակ չես, զգացողություն, որ դաջվելու է տասներկու տարեկան տղայի հիշողության մեջ, ու փնտրելու է, մենակ չես, լուսանկարներում, մարդկանց

դեմքերին, ամենուր, մենակ չես, տղան փնտրելու է գրքերում, իրեն շոյող բարակ ձեռքի շարժման մեջ, ամենուր, մենակ չես, փնտրելու է երազներում, ականջները լցվող ձայների մեջ, ամենուր, մենակ չես, փնտրելու է ողջ կյանքի ընթացքում, բայց գտնելու է պատերազմ տեսած աչքերում միայն, չէ, մարտկո՛ց, համազարկո՛վ կրա՛կ, բղավում է, ու հրետանին ցնցում է գետինը, չէ, կրա՛կ, հրամայում է ձայնը, հողն ալիքվում է ոտքերիդ տակ, չէ, աչքեր, ուր վախն այլևս չի դառնում սրբազան դող, ուր կյանքը խորացող դատարկություն է, չէ, այդ աչքերում չկա, չէ, Աստված, չէ, հակառակորդը տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներից հայ դիրքապահների ուղղությամբ արձակել է ավելի քան 2700 կրակոց, ասում է, շփման գծի գրեթե բոլոր հատվածներում ադրբեջանական զինուժը կիրառել է տարբեր տրամաչափի ականանետեր և նռնականետեր, ասում է, հատկապես՝ ինտենսիվ հրետակոծության են ենթարկվել առաջնային գծի հյուսիսարևելյան՝ Մարտակերտի ուղղությամբ տեղակայված մարտական հենակետերը, որոնց ուղղությամբ 60 և 82 միլիմետրանոց ականանետերից արձակվել է 52 արկ, ասում է, ՊԲ առաջապահ զորամասերը ադրբեջանական զինուժի ակտիվությունը ճնշելու համար դիմել են պատժիչ գործողությունների և վերջինիս ստիպել ձեռնպահ մնալ իրադրությունը սրելու, ասում է, հետագա քայլերից, ասում է…

-Նեգրի նկարին ես նայո՞ւմ:- Լաշան կանգնած է կողքիդ, հայացքն անսպասելի խաղաղ է, կռնատ Լաշան է, Լաշան թևեր չունի, աչքերը զարմանալի խաղաղ են:

-Բոլորին էլ նայում եմ՝ իրենք բուժվել են, տանն են:- Պատասխանում ես:

-Բայց հլը պրոթեզնե՛րը տես,- շարունակում է,- սպորտային են, սրանցով վազում են…

-…

-…

-…

-…

…Ազատության արձանի մոտ կանգնած մարդը շարունակ ժպտում է, ծնկներից ներքև պրոթեզ է, վստահ ես՝ քո երկրում չկա, տղաներից ոչ մեկի երկրում էլ չկա, չի կարող լինել, Ամերիկայում է ու ամերիկացիների համար, երևի ամեն օր վազում է, ասում է, միայն Ամերիկայում է, հաստատ ամեն օր վազում է, Ամերիկայում է, սևամորթը քրտնած է, մկանուտ թևերը փայլում են, Ամերիկայում պրոթեզ կա, որ իրական թևից չի տարբերվում, ասում է, մատներդ էլ ես կարողանում շարժել, ասում է, փորձում ես պատկերացնել, բայց չի ստացվում,

Լաշան թևեր չունի, վրացի Լաշան է, ուզում ես նայել, ուսումնասիրել թևերի բացակայությունը, ու մեղավոր լինելու անմեկնելի զգացողությունը խտանում է, անընդհատ ուզում ես նայել, ու մեղքի հանկարծահաս զգացողությունը ստիպում է վարանել, դեռ չգիտես՝ ապրելու ուժ գտնելն անխոստովանելի ուրախությունն է տեսնել քեզնից դժբախտներին, չէ, դեռ, չէ, չգիտես, չէ…

-…

-…

-…

-…

…մոտենում է, Լաշայի գնալուց հետո Հայկը իսկույն մոտենում է քեզ.

-Պրոթեզի մասին է՞ր պատմում:- Հարցնում է:

-Ի՞նչ իմացար:- Զարմանում ես:

-Ինձ հենց բռնացնում, դրա մասին է խոսում, արդեն անգիր եմ արել:

-Իմ հետ առաջին անգամ էր խոսում:

-Քաշվեցիր, սրանից հետո պոկ չի գալու:- Ծիծաղում է ու ձեռքը տանում բերանին, գիտեմ, Թբիլիսիից է, հայ տատն է մեծացրել, բայց իրեն վրացի է համարում, բայց, գիտեմ, վրացի է, գիտեմ, վերին շրթունքի կեսը չկա, ատամներն էլ երկշերտ են, եռանկյունաձև ու սուր, երևի շատ սուր…

-…

-…

-…

-…

…ամենաշատը ալպինիստի նկարն եմ հավանում, պատին մոտենալով՝ ասում է Հայկը, լեռնագնացի հագուկապով, դեմքի զգալի մասը ակնոցով ծածկած մարդը ձեզ է նայում, ամեն տարի մոտ հինգ հարյուր ալպինիստ փորձում է նվաճել Էվերեստը ու մեծ մասը չի կարողանում, որովհետև ինչքան բարձրանում ես, էնքան թթվածինը չի հերիքում, բացառիկ առողջներն են հասնում գագաթին, ասում է, նկարի մարդը մեղմ ժպտում է սառցակալած մորուքի տակից, իսկ թիկունքում՝ ցածրում ամպեր են ու ձյունապատ գագաթներ, Էվերեստի հետ կապված ինչքան ռեկորդ կա շերպաներին է պատկանում, ասում է, բոլոր

ռեկորդները նրանցն են, ասում է, շերպան ազգություն է, Էվերեստի լանջերին են ապրում, աշխարհի ամենաառողջ մարդիկ են, ասում է, ալպինիստներից քչերն են խոստովանել, բայց բոլորն էլ գիտեն, որ շատ հաճախ նրանց փոխարեն ուղեբեռը հենց շերպաներն են տանում, ասում է, շերպա էրեխեքը հինգ դոլարով պատրաստ են սարի վրա գտնվող ճամբար հասցնել գարեջուր կամ մանր-մունր ինչ ուզես, ասում է, իսկ շերպաներից մեկը մի ամբողջ գիշեր է անցկացրել գագաթին՝ քնելով էնտեղ, պատկերացնո՞ւմ ես, ամբո՛ղջ գիշեր, սովորական մարդը տասը րոպեից շատ չի ձգում…

-…

-…

-…

-…

-Երանի շերպա ծնված լինեինք, չէ՞:- Ծիծաղում է Հայկը՝ ձեռքն արագ տանելով բերանին:

-Տեսնես էստեղ շերպա կա՞:- Հարցնում ես:

-Գժվեցի՞ր, ասում եմ՝ ամենաառողջ մարդիկ են, ի՞նչ գործ ունեն էստեղ:

-Ոնց էլ լինի մեկը կլինի:

-Բացառվում է:

-Ի՞նչ գիտես:

-Գիտեմ:

-Երբեք չեն հիվանդանո՞ւմ:

-Երբե՛ք:

-Ուրեմն՝ պատերազմներից տուժածներ կլինեն:

-Աշխարհի ամենաբարի ժողովուրդն են:

-Կարող է վատ հարևաններ ունեն:

-Չէ, հարևաններն էլ լավն են, մի խոսքով՝ իրենց մոտ պատերազմ չկա:

-Էդպես չի լինում:

-Լինում է:

-…

-…

-…

-…

-Հեգնում ես, որովհետև չես պատկերացնում՝ ինչքան առողջ են:- Ասում է Հայկը:

-Կատակ եմ անում:- Պատասխանում ես:

-Իսկ ես լուրջ եմ խոսում,- շարունակում է,- մենք լինեինք նրանց փոխարեն՝ մի բոպե էլ չէինք ձգի ու հաստատ երկու դիակ էլ կավելանար Էվերեստի վրա:

-Էվերեստի վրա դիակներ կա՞ն:

-Լիքը:

-Հիմա՞:

-Հենց հիմա:

-Ո՞նց:

-Ոնց-ոնց, մարմինները ընկած են սառույցի վրա:

-Ինչի՞ չեն թաղում:

-Թաղելու համար իջեցնել է պետք:

-Թող իջեցնեն:

-Հեշտ ես ասում:

-Չեն կարողանո՞ւմ:

-Չէ:

-Ուղղաթիռով էլ չի՞ լինի:

-…

-…

-…

-…

…աշխարհում մեռնելու համար ամենալավ տեղը լեռան վրա է, շարունակում է Հայկը, իր բառերը չեն, իրենը չեն, առավել ևս եթե էդ լեռը Էվերեստն է, շարունակում է, ձայնն իրենն է, բառերն՝ ուրիշինը, դեռ չգիտես՝ բառերում մարդիկ կան միշտ, բառերումդ մարդիկ են ապրում, ու նրանց երազները քո երազներն են դառնալու, ու նրանց վախերը վախերն են դառնալու քո, ձայնն իրենն է, բառերն՝ ուրիշինը, դեռ չգիտես՝ ուրիշի բառերը պատեր են դառնալու շուրջդ, ուրիշ չէ, նա ուրիշ չէ, բառերն, իբրև հացի փշրանքներ, հավաքել ես ափիդ մեջ, այդ կարճ հիշողությունն, իբրև հացի փշրանքներ, ժողովել ես ափիդ մեջ, տո՛ւր, կրկնում ես ու չես վերցնում, պատրա՛ստ եմ, հաստատում ես ու վարանում, տե՛ս ինձ, ձայնում ես ու չես նյութականանում, իսկ հողը արնահոսում է արթնությունդ, հողը համոզում է, թե կան ավելի վեհ բաներ քան խիղճն է, ուրիշ չէ, բացի՛ր բռունցքդ օդի մեջ, բախտը կատվի պես պոչը կհպի ոտքիդ, բացի՛ր բռունցքդ՝ ցրելով պարունակությունը, բախտը իսկույն կքսմսվի ոտքերիդ, նա ուրիշ չէ, բա՛ց թող, չէ, դու նա չես, չէ, ապրիլի 1-ին՝ ժամը 12:20-ի սահմաններում, ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում հակառակորդի կողմից արձակված կրակոցից մահացու հրազենային վիրավորում է ստացել ՊԲ զինծառայող, 1996 թվականին ծնված Վ. Ա. Մ.-ն, ասում է, դեպքի մանրամասները պարզելու համար կատարվում է քննություն, ասում է, ԼՂՀ պաշտպանության նախարարությունը կիսում է կորստյան ծանր վիշտը և իր զորակցությունը հայտնում Վ. Մ.-ի ընտանիքի անդամներին, հարազատներին, ասում է, և ծառայակիցներին, ասում է…

-…

-…

-…

-…

-…

…ներս եք մտնում, սենյակում աննախադեպ իրարանցում է, երբ դու ու Հայկը ներս եք մտնում, իսկ բոլորն աղմկում են, իրար ցուցումներ տալիս ոգևորված, ներս եք մտնում, իսկ բոլորը փորձում են որսալ մահճակալի տակ պատսպարված միջատին, այ քեզ բան, անկեղծորեն զարմանում է Հայկը, փաստորեն էստեղ էլ տառական կա, таракан, երբեք չես մտածել այդ մասին, բայց դու էլ Հայկի պես վստահ էիր, тараканище, երբեք չես մտածել, բայց քեզ էլ թվում էր՝ Գերմանիայում չկա, չի կարող լինել, таракан, բռնեցի՛, բղավում է, մազերը քրտնել,

իրար են կպել, թրջված հասկեր են հիշեցնում, տղերք բռնե՛լ եմ, բղավում է Կամիլը, մազերը քրտնել, ցորենի հասկեր են հիշեցնում, շապիկը գցել է միջատի վրա ու բռնել, հավաքվել եք շուրջը, ուսումնասիրում եք, խմբվել եք շուրջը.

-…

-…

-…

-…

-…

-Իզուր բռնեցիր,- միջատին նայելով՝ ասում է Շահզոդբեկը,- բեղիկներից մեկը կարճ է:

-Հետո ի՞նչ, որ կարճ է:- Իսկույն արձագանքում է Կամիլը:

-Վատ նշան է:- Շարունակում է ուզբեկը:

-Հիվանդո՞տ է, այ քեզ թարսություն, ես էլ ուզում էի պահել:- Վրա է բերում ու ծիծաղում, բոլորդ ծիծաղում եք:

-Ուրիշ բան եմ ասում:

-Այսինքն առո՞ղջ է, փառք Աստծո, հաստատ կպահեմ:- Ծիծաղում է, ծիծաղում եք:

-Կատակ չեմ անում, մի վատ բան է լինելու հետդ:

-Էշ-էշ դուրս մի՛ տուր:

-Ճիշտ եմ ասում:

-Ի՞նչն ես է ճիշտ ասում:

-Էդպես է,- Շահզոդբեկը ուսերը թոթվում է,- երբ բեղիկներից մեկը մյուսի համեմատ կարճ է լինում, ուրեմն վատ նշան է:

-Բա, երբ հավասար են, հաջողություն է բերո՞ւմ:- Նույն ոգով պատասխանում է Կամիլը ու ծիծաղում, ծիծաղում եք:

-…

-…

-…

-…

-…

…սենյակի լույսը վաղուց անջատված է, գիտեմ, տղաներից շատերն արդեն քնել են, գիտեմ, իսկ Կամիլը դեռ խոսում է, երազում միշտ կամ ֆուտբոլ եմ խաղում, կամ՝ հեծանիվ քշում, ասում է, ֆուտբոլային երազներն ամենահավեսն են. փափուկ, սիրուն խոտը, լույսերը, ամեն ինչ էնքան իրական է, ոնց որ իրոք մեծ ստադիոնում լինեմ, մի անգամ խոտի հոտ էլ կար, նոր հնձած խոտի հոտ էր, ասում է, ու վազում էի, շատ արագ էի վազում, հետևիցս հասնել չէր լինի, ասում է, ամենազզվելի երազները խխունջներով երազներն են, միակ կենդանին է, որից սիրտս խառնում է, այ հիմա էլ հիշեցի թե չէ՝ մարմինս փշաքաղվեց, ասում է, փոքր ժամանակ տանը ակվարիում ունեինք, մեջը բացի ձկներից խխունջներ էլ կային, մի օր որոշեցի բռնել ամենամեծին, ձեռքիս կպնելն ու մարմինս կարմրուկի ցանի պես դուրս տալը մեկ եղավ, ասում է, էդ օրվանից սպանես մոտ չեմ գա դրանց, ասում է, հենց մրսում եմ կամ, ասենք, պիտի հիվանդանամ, տեսնում եմ երազում, չգիտես որտեղից հայտնվում են ճանապարհիս, շորերիս վրա, ֆո՛ւ, ամենասարսափելին՝ գրպաններումս…

-…

-…

-…

-…

-Կամի՛լ, հեչ տունը, ձերոնց տեսնո՞ւմ ես:- Հարցնում ես:

-…

-…

-…

-…

…երկու օր է նույն երազն եմ տեսնում, ասում ես, երկու օր է նույն բանն եմ տեսնում, լրիվ նույնը, ասում ես, սկզբում հորաքրոջս ամուսինը հեռվից ինձ ձեռքով է անում, շուրջս բարձր գմբեթներով եկեղեցիներ են, էդպիսի եկեղեցիներ Հայաստանում չկան, երբեք չեմ տեսել, ասում ես, նայում եմ ու չեմ զարմանում, բայց նայում եմ ու չեմ զարմանում, ասում ես, հետո հորաքրոջս ամուսինը էլի

ձեռքով իր մոտ է կանչում, ժամանակ չկորցնելով արագ վազում եմ դեպի նրա կապույտ Ժիգուլին, որ կանգնեցրել է եկեղեցիներով շրջապատված հրապարակում, երկուսով ենք, մեզնից բացի ոչ ոք չկա, հետո բացում է մեքենայի հետևի դուռը ու ժպտում՝ հասկացնելով, թե նվեր ունեմ ներսում, ինքը ձայն չի հանում, բայց ես հասկանում եմ ու հայտնվելով մեքենայի մեջ՝ տեսնում մեր տան աբոյը, ասում ես, մեքենան ներսից ամբողջությամբ մեր տան աբոյով է ծածկված, մեր տան պատերի աբոյն է, ասում ես, ձեռք եմ տալիս, իսկ հորաքրոջս ամուսինը ժպտում է, նա մահացել է, ժպտում է, նա էլ է մահացել, ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը, ախր մահացել է, շփման գծի հարավային, հարավարևելյան և հյուսիսարևելյան ուղղություններով հակառակորդը ձեռնարկել է բացահայտ հարձակողական գործողություններ՝ այլ զինատեսակների հետ միասին օգտագործելով հրետանի, զրահատեխնիկա և օդուժ, ասում է, բացի առաջնագծում ընթացող մարտերից, հակառակորդը հրետանային հարվածներ է հասցրել խաղաղ բնակավայրերին և մի շարք զորամասերի մշտական տեղակայման վայրերին, ասում է, այս պահի դրությամբ ղարաբաղա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի ողջ երկարությամբ տեղի են ունենում թեժ բախումներ, ասում է, ՊԲ առաջապահ ստորաբաժանումները, ընդունելով հակառակորդի մարտահրավերը, վարում են հուսալի պաշտպանական մարտեր, ասում է, առաջնագծում ստեղծված իրադրության մասին, ասում է, առավել մանրամասն, ասում է, կանդրադառնանք մեր առաջիկա…

-…

-…

-…

-…

-…

…ուշ ես արթնանում, բոլորն արդեն ոտքի վրա են, աղմկում են.

-Գութրն մողգրն:- Ողջունում ես Կամիլին:

-Գութրն մողգրն:- Անկողնու վրա նստած մռթմռթում է:

-Բան է՞ եղել, մի տեսակ ես:- Հարցնում ես:

-Հը-ը:- Պատասխանում է:

-Բա ինչի՞ ես տխուր:

-…

-…

-…

-…

-Ատամիս ցավից մեռնում եմ, ինչ զարթնել եմ ցավում է,- Կամիլը զայրանում է,- թե ինչի՛ բռնեցի էդ անտեր տառականին…

-…

-…

-…

-…

-…

-…

-…

-…

-…

-…

-…

-…

-…

-…

-…

-…

-…

-…

-…

-…

-…

-…

-…

-…

-…

-…

-…

-…

-…

-…

-…

-…

-…